ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Գերմանիայի Դաշնային Հանրապետություն (Բեռլին) գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը.**

   Տաթևիկ Ստեփանյան

   Սոֆի Բոստանչյան

   Անի Թաթոյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

   ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ,

   ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հավասար հնարավորությունների ապահովման վարչության մարդկանց թրաֆիքինգի և կանանց հիմնահարցերի բաժնի պետ,

   ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հավասար հնարավորությունների ապահովման վարչության մարդկանց թրաֆիքինգի և կանանց հիմնահարցերի բաժնի ավագ մասնագետ:

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   Գերմանիայի Դաշնային Հանրապետություն, Բեռլին

   2025 թվականի հունիսի 11-ից 13-ը:

4. **Հրավիրող կողմը.**

   Եվրոպայի խորհրդի երևանյան գրասենյակ, «Կանանց նկատմամբ բռնության հաղթահարումը և գենդերային հավասարության ամրապնդումը Հայաստանում» ծրագիր շրջանակում:

Scanned with CamScanner

5. **Գործուղման նպատակը.**

«Ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձանց ռեաբիլիտացման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2025 թվականի հունվարի 16-ի N 35-Ն որոշման համաձայն՝ 2026 թվականից ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը պետք է ապահովի համապատասխան ռեաբիլիտացման ծրագրերի իրականացումը: Մասնավորապես, նախատեսվում է ծրագրերի մշակում, ծառայություններ մատուցող անձնակազմի վերապատրաստում, ծառայությունների պատվիրակում հասարակական կառույցներին և ընթացիկ մոնիթորինգի կազմակերպում:

Սույն գործընթացի շրջանակում կազմակերպվել էր ուսումնական այց՝ նպատակ ունենալով աջակցել վերոնշյալ ծրագրի արդյունավետ մշակմանն ու ներդրմանը՝ հիմնվելով Գերմանիայի Դաշնային Հանրապետության համապատասխան փորձի վրա:

Վերոգրյալ այցը նպատակ է հետապնդել մասնագիտական փորձի փոխանակմանն ու կարողությունների զարգացմանը՝ ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձանց վարքագծային փոփոխությանը նպաստող մեթոդաբանությունների ուսումնասիրության և դրանց ազգային մակարդակով ադապտացման միջոցով վերոնշյալ ծրագրի արդյունավետ իրականացման ապահովմանը:

Ուսումնական այցը միաժամանակ միտված է եղել ուսումնասիրել այն ծառայությունները, որոնք ուղղված են բռնություն գործադրած անձանց վերաինտեգրմանը համայնքային կյանքում՝ կանխելով բռնության կրկնությունը և ապահովելով բռնության ենթարկված անձանց պաշտպանությունը: Բացի այդ, այցի նպատակն է եղել խթանել ոլորտային քաղաքականությունների ձևավորման, համապատասխան օրենսդրական բարեփոխումների և միջգերատեսչական համագործակցության մեխանիզմների կայացմանն ուղղված գործընթացները:

Այսպիսով, ուսումնական այցի հիմնական նպատակներն են եղել.

Scanned with CamScanner

- ✓ Բարձրացնել պետական մարմինների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների տեղեկացվածությունը ընտանեկան բռնության կանխարգելման, պաշտպանության և քաղաքականությունների մշակման ոլորտում գործող միջազգային չափանիշների, իրավական շրջանակների և Գերմանիայի Դաշնային Հանրապետության լավագույն փորձի վերաբերյալ:
- ✓ Խորացնել մասնակիցների գիտելիքները ընտանեկան բռնություն գործադրած անձանց ռեաբիլիտացման ծրագրերի մշակման և իրականացման մոդելների ու մեխանիզմների շուրջ:
- ✓ Ամրապնդել միջգերատեսչական համագործակցության արդյունավետ մեխանիզմները՝ ռեաբիլիտացիոն ծառայությունների կազմակերպման գործընթացում, ընդգծելով կանանց աջակցման ծառայությունների ներգրավման կարևորությունը՝ բռնությունից տուժած անձանց պաշտպանության և անվտանգության ապահովման նպատակով:

6. Քննարկված թեմաները.

Ստորև ներկայացվում են ուսումնական այցի ընթացքում քննարկված առանցքային թեմաները, որոնք ուղղակիորեն առնչվում են ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձանց ռեաբիլիտացիոն ծրագրերի արդյունավետ մշակմանն ու գործնական կիրառմանը.

- **Ընտանեկան բռնություն գործադրած անձանց հետ աշխատանքի եվրոպական մոտեցումները՝** ծրագրերի մոդելներ, գնահատման մեխանիզմներ, գործնական խնդիրներ և ռիսկերի նվազեցման միջոցառումներ:
- **Գերմանիայի Դանային Հանրապետության ազգային քաղաքականությունը գենդերային և ընտանեկան բռնության ոլորտում՝** օրենքների, ռազմավարությունների և զոհերի աջակցության ծառայությունների համակարգ:

Scanned with CamScanner

- **Ծառայությունների որակի ապահովման մեխանիզմները՝** իրականացվող ծրագրերի վերահսկողություն և չափանիշների մշակում:
- **Աշխատանք ընտանեկան բռնություն գործադրած անձանց հետ՝ որպես վերասոցիալականացման գործիք՝** Ընտանեկան բռնություն գործադրած անձանց հետ աշխատանքի դաշնային ասոցիացիայի փորձը (BAG TäHG):
- **Բեռլինի բռնության կանխարգելման կենտրոնի աշխատանքը՝** ընտանեկան բռնություն գործադրած անձանց հետ ծրագրերի կառուցվածք, չափորոշիչներ և մասնագիտացված մոտեցումներ:
- **Աշխատանք ընտանեկան բռնություն գործադրած կանանց հետ՝** խնդիրների առանձնահատկություններ և արձագանքման մեթոդներ:
- **Զոհերի անվտանգության ապահովումը որպես առաջնահերթություն՝** համագործակցություն աջակցության կենտրոնների և խորհրդատվական ծառայությունների միջև:
- **Տեսական և գործնական բաղադրիչների համադրություն տղամարդկանց հետ ծրագրերում՝** մեթոդաբանություն և պրակտիկա:
- **Բռնություն գործադրած շահառուների հետ աշխատանքի կառուցվածքային մարտահրավերները՝** լեզվական, իրավական և սոցիալական խոչընդոտների հաղթահարում:
- **Ինտեգրված և համագործակցային մոտեցումներ՝** տարբեր պետական և հասարակական կառույցների ներգրավում և համակարգում:
- **Անհատականացված մոտեցումներ տարբեր խմբերի նկատմամբ՝** հարմարեցված միջամտությունների կիրառություն:
- **Եզրափակիչ քննարկում՝** ծրագրերի մշակման ընդհանուր խնդիրները և ուսումնական այցի հիմնական արդյունքների ամփոփում:

Scanned with CamScanner

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Սույն ուսումնական այցի շրջանակում կայացել են մի շարք աշխատանքային հանդիպումներ և մասնագիտական քննարկումներ՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետության ընտանեկան բռնություն գործադրած անձանց հետ աշխատանքի ոլորտում առաջատար համարվող պետական և քաղաքացիական կառույցների ներկայացուցիչների մասնակցությամբ:

Հանդիպումներին ներգրավված են եղել Գերմանիայի Դաշնային Հանրապետության Կրթության, ընտանիքի, մեծահասակների, կանանց և երիտասարդության հարցերով դաշնային նախարարության, Ընտանեկան բռնություն գործադրած անձանց հետ աշխատանքի դաշնային ասոցիացիայի, Բեռլինի բռնության կանխարգելման կենտրոնի, ինչպես նաև ընտանեկան բռնության կանխարգելման և ռեաբիլիտացիայի ոլորտում գործող հասարակական կազմակերպությունների և խորհրդատվական կենտրոնների ներկայացուցիչներ:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Տաթևիկ Ստեփանյանը հանդես է եկել ելույթով՝ ներկայացնելով Հայաստանի առաջնահերթությունները ընտանեկան բռնություն գործադրած անձանց ռեաբիլիտացման ոլորտում: Մասնավորապես, շեշտադրվել են ՀՀ կառավարության թիվ 35-Ն որոշմամբ նախատեսված ծրագրերի մեկնարկը 2026 թվականից, ինչպես նաև գենդերային քաղաքականության իրականացման 2025-2028 թվականների ռազմավարության դրույթները: Նշվել է, որ ռազմավարության շրջանակում նախատեսված են մի շարք միջոցառումներ՝ ուղղված բռնության կանխարգելմանը, զոհերի պաշտպանությանը և մեղադրյալների վերաինտեգրմանը:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Մարդկանց թրաֆիքինգի և կանանց հիմնահարցերի բաժնի պետն ու նույն բաժնի ավագ մասնագետը հանդես են եկել մասնագիտական դիտարկումներով և հարցադրումներով՝ վերաբերող ռեաբիլիտացիոն ծրագրերի մշակման

Scanned with CamScanner

մեթոդաբանությանը, դրանց արդյունավետության չափման գործիքներին, շահառուների հետ տարվող աշխատանքի մոտեցումներին և հնարավոր ռիսկերի նվազեցման ուղիներին: Բացի այդ, կարևորվել է զոհերի անվտանգության ապահովման առաջնահերթությունը՝ բռնություն գործադրած անձանց հետ տարվող աշխատանքի համատեքստում:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Ուսումնական այցի ընթացքում ձեռք բերվեց պայմանավորվածություն գերմանական կողմի հետ՝ ուսումնական այցի մասնակիցներին փոխանցել բոլոր այն նյութերը, որոնք ներկայացվել են եռօրյա հանդիպումների ընթացքում, այդ թվում՝ սահիկաշարեր, աշխատանքային մոդելներ, մեթոդական ցուցումներ և ուղեցույցեր:

Նշված նյութերի ստացումը կնպաստի ռեաբիլիտացիոն ծրագրի հետագա մշակմանն ու տեղայնացմանը՝ Հայաստանի Հանրապետությունում:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

Տաթևիկ Ստեփանյան
Սոֆի Բոստանչյան
Անի Թաթոյան

18.06.2025թ.

Scanned with CamScanner